



**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ**

Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը երէկ Ղոզմի Կուսակցութեան Ռաուշէի կեդրոնատեղիին մէջ գումարեց արտակարգ նիստ մը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ համախմբումի մօտ Հ. Յ. Դ. ի ներկայացուցիչը:

Նիստը խստի դատապարտեց ամերիկեան Քոնկրէսին կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծը, որ պատրաստուած է սիոնական լոպիին կողմէ եւ որուն ներկայ գտնուած է ԿՕՐ. Միշէլ Աուն իբրեւ նոյն մտահոգութիւնը բաժնող կողմ:

Նիստին ընթացքին շեշտուեցաւ կառչած մնալ ազգային միասնականութեան եւ դիմադրել Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծին, որ կը խախտէ ներլիբանանեան կառուցութիւնը:

Նիստը շեշտեց նաեւ Սուրիոյ հետ գործակցութեան եւ միացեալ ճակատագրի ամրապնդումը, ինչպէս նաեւ կոչ ուղղեց Լիբանանի մէջ դիմադրութեան տէր կանգնելու, մինչեւ Խորախի բռնազրամած լիբանանեան հողերու ամբողջական ապստարտումը:

**ՔՈՐԱՅԹԵՄ ՄԵՉ**

**ՀԱՐԻՐԻ ՆԱԽԱԳԱՀԵՑ  
ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ԺՈՂՈՎԻՆ**

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայթ-մի մէջ նախագահեց ապապետականացման գերագոյն խորհուրդի նիստին, որուն ներկայ գտնուեցան նախարարներ Պահիժ Թապաւրա, Մարուան Համատէ, Յուսէն Սիւնիորա, Ասատ Հըրտան, Ժան Լուի Քորտահի, ապապետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղապի Եուսէֆ եւ «ԷլՅ. Էս. Պի. Սի.» դրամատան ելեւմտական հարցերու խորհրդական Քարիմ Սայիտ:

Ժողովին ներկայացուեցան բջիջային հեռաձայնի ընկերութիւններու ապապետականացման գծով աճուրդի եւ նուազուրդի տեղեկագիրները: Խորհուրդը որոշեց վերատեսութեան հանգրուան յայտարարել:

Խորհուրդի տուած մէկ այլ որոշումին համաձայն, պիտի պահանջուի փորձագէտներէ եւ խորհրդականներէ յստակ ծրագիր մը մշակել՝ կանոնաւորելու համար ընկերութիւններուն աշխատանքը, եթէ պատահի, որ նուազուրդը ընդունուի փոխան աճուրդի:

Աճուրդի եւ նուազուրդի պայմանաձայն երկու ամիս է:

**ԾԱԽՈՒ Է  
ՅԱՐՄԱՐ ԳԻՆՈՎ**

Յարկաբաժին մը Պիաբուրի մէջ (Չալքայէն վեր), մօտ 200 քառ. մէթր, չորրորդ յարկ, 3 մնջասնեակ, 3 բաղնիք, մեծ հիւրանոց եւ ճաշասենեակ, լուսաքիչ սենեակ, կահաւորուած խոհանոց, ինչպէս նաեւ մեծ պատշգամ գեղեցիկ տեսարանով եւ կանառու: Ընդ. 03-203459:

**ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ  
ՏԱՐՈՒՄԸ ԱՌԻԹՈՎ**

**Շուկանաւորութեամբ՝  
ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ**

Lebanese Armenian Technical College  
L.A.T.C.ի (Ազգային Քոլէճ)  
տնօրէնութիւնը

Կ'ընծայէ B.T.ի աշակերտներուն

**ԱՆՎՃԱՐ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ  
ԾՐԱԳԻՐԻՆ ԾՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Մանրամասնութեանց համար դիմել՝  
Ազգ. L.A.T.C.ի տնօրէնութեան,  
ամեն օր, ժամը 5-ն 9:

Հասցէ՝ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան  
քոլէճի շէնք, հեռաձայն՝ 01/244576:

**ՆԵՊԻՇ ՊԸՐՐԻ ԱՄԱՐՏԵՑ ԻՏԱԼԻԱ  
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Խորհրդարանի նախագահ Նեպիշ Պըրրի երէկ աւարտեց Իտալիա իր պաշտօնական այցելութիւնը, յետմիջօրէին հանդիպում մը ունենալով Իտալիոյ Ծերակոյտի նախագահ Մարչելլօ Փերայի հետ:

Պըրրի շնորհակալութիւն յայտնեց Փերայի՝ Իտալիոյ կողմէ Լիբանանի ցուցաբերուած քաղաքական եւ տնտեսական օժանդակութիւններուն համար:

Անդրադառնալով շրջանային կացութեան, Պըրրի մեկնելով Միջին Արեւելքի վերջին իրադարձութիւններէն յայտնեց, որ կացութիւնը կը նմանի հրաբուխի, որ որեւէ պահու կրնայ ծայրօքիլ: Ան վերահաստատեց, որ պաղէստինեիսրայիլեան տագնապը կը լուծուի միայն այն ատեն, երբ կը վերադարձուի Մատրիտի համաձայնագրի սկզբունքներուն եւ կ'որդեգրուի արդար եւ ամբողջական խաղաղութիւն:

Պըրրի ընդգծեց, որ խաղաղութեան ճամբու քարտէսը ձախողած է, որովհետեւ վստահած է միայն ապահովական լուծման տարբերակին: Ան դիտել տուաւ, որ արաբներն ու իսրայիլները դէմ են ահաբեկչութեան, սակայն շեշտեց նաեւ ահաբեկչութեան եւ դիմադրութեան միջեւ մեծ տարբերութիւնը:

Սուրիոյ մասին խօսելով Պըրրի ըսաւ, որ Դամասկոս Միջին Արեւելքի մէջ տագնապներու լուծման հիմնական դարպաս է:

Իր կարգին, Փերա շեշտեց Լիբանան - Իտալիա երկկողմանի յարաբերութիւններուն ամրապնդումը եւ աւելցուց, որ Միջին Արեւելքի մէջ Եւրոպայի կարեւոր դերակատարութիւնը այս հանգրուանին կենսական է:

**ԱՏՏՈՒՄ. ԶՕՐ. ԱՌԻՆԻ ԴԻՄ ԱՐԴԷՆ  
ԻՍԿ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԿԱՆ**

Ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուժ, ընկերակցութեամբ դատական իշխանութեանց գերագոյն խորհուրդի նախագահ դատախաչ Թանիս Խուրիի, երէկ այցելեց Նապաթիէի արդարութեան պալատ, ուր ընդունուեցաւ Նապաթիէի առաջ դատախաչ Ապտէլ Մենէմ Համարի եւ այլ դատախաչներու ու արդարութեան պալատին մէջ գործող իրաւաբաններու եւ պաշտօնէաներու կողմէ:

Անդրադառնալով ԿՕՐ. Միշէլ Աունի կողմէ ամերիկեան Քոնկրէսին մէջ կատարուած յայտարարութիւններուն, որոնց հիմամբ՝ ան հաւանութիւն ցուցաբերած է եւ արդար նկատած Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծը, Ատտուժ ըսաւ, որ ԿՕՐ. Աունի դէմ արդէն իսկ դատական օրինական հարցեր գոյութիւն ունին եւ յոյս յայտնեց, որ ան նման հարցերու մօտենայ ազգային սեփական դիտանկիւնէն եւ ոչ՝ գրաւը դնելով կարգ մը անհատներու վրայ:

Ատտուժ շեշտեց, որ Լիբանանի եւ Սուրիոյ միասնականութիւնը կը կազմէ արաբական իրաւունքներու պաշտպանութեան հիմքը: Ան աւելցուց, որ Լիբանանի մէջ դատական իշխանութիւնը իր պարտականութիւնը կը կատարէ թափանցիկութեամբ, հեռու քաղաքական յարուածութիւններէ:

**ԻՐԱՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ  
ՆԱԽԱՐԱՐԸ ...**

Ծարունակուած Ա. Էջէն

մէ սպաննուած են, իսկ հարիւր ուրիշներ ալ ինկած են «ոչ թշնամական» միջադէպերու ընթացքին:

Ամերիկացի զինուոր մը իր կարգին, երէկ «սխալմամբ» սպաննեց իրաքցի թարգմանիչ մը, որ կ'աշխատէր իտալացի դիւանագէտի մը քով, յայտնեց Իտալիոյ արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը: Ան ըսաւ, որ միջադէպը տեղի ունեցած է Հինգշաբթի օր, Իրաքի հիւսիսային շրջանին մէջ: Բանբերը աւելցուց, որ Իրաքի մէջ ամերիկեան իշխանութիւնները ներողութիւն չ'ապահովեցին գործուած սխալին համար:

Իրաք ուժ ուղարկելու ծրագրին, որուն գծով տակաւին համախոհութիւն չ'են գոյացուցած:

Մեկնաբաններ կ'ըսեն, որ Անգարա որոշումը պիտի յետաձգէ մինչեւ որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ նոր բանաձեւ մը որդեգրուի: Անգարա սկզբունքով տրամադիր է մինչեւ 10 հազար զինուոր ուղարկելու Իրաք, ուր սակայն յատկապէս

իրաքցի քիւրտ ղեկավարներ կ'առարկեն եւ սպառնալիք կը նկատեն թրքական ուժերուն ներկայութիւնը յատկապէս՝ հիւսիսային քրտաբնակ շրջաններուն մէջ:

**ՃՆՈՐՇԱԿԱԼԻՔ**

●Պալըզձեան ընտանիք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպղտակով, նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց հարազատին՝ Միշ. ՐԱՆ ՊԱԼԸԳՃԵԱՆԻ մահուան սուգին:

**ԿՈՒՉՈՒԻ**

●Վարպետ ոսկերիչ մը (ստեղծեր). հեռ. 01-338821:

**ՎԱՐՉՈՒ  
ՅԱՐԿԱԲԱԾԻՆ**

●Մար Եուսէֆ հիւանդանոցի մօտ: Դիմել՝ հեռ. 08-621595:

**ԾԱԽՈՒ ԶԵՆՔ**

●Երկարակահի շէնք մը, իրաքանցիւր յարկաբաժին երկու մնջասնեակ, հիւրասրահ, եւ յարակից մասեր: Մար Եուսէֆ եկեղեցու մօտ: Ընդ. 01/251261, 03/538530 եւ 03/574781:

**ԱԿՆԱՐԿ**

**ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ  
(ՅԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՒԱՑՄԱՆ  
12ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)**

Տասներկու տարի անցած է Հայաստանի վերանկախացումէն՝ 21 Սեպտեմբեր 1991էն, եւ թէեւ այսօր ազգովին ամենայն հպարտութեամբ կը նշենք անկիւնադարձային այս թուականը, այսուհանդերձ դուրս գալով ուրախութեան «գինովութենէն», արձանագրուած յաջողութիւններուն վուզահեռ մատնանշենք նաեւ թերիները, վանտնք սրբագրելու առաջադրանքով:

Յետադարձ ակնարկ մը անցնող տասներկու տարիներուն վրայ բաւարար է հաստատելու, որ տակաւին կան ահագին բացթողնումներ բոլոր մարպետներուն մէջ անխտիր, սակայն առաւելաբար տնտեսական - ընկերային բնագաւառին մէջ, որուն ցարդ անկախուն վիճակը կը մտահոգէ բոլորս, բայց ամէնէն աւելի՝ հայրենի մեր ժողովուրդը, որովհետեւ ան է որ կը կրէ տագնապին ուղղակի հետեւանքը: Հայրենի պետութիւնը այս իմաստով բազմապատիկ պարտաւորութիւն ունի իր ուսերուն, որովհետեւ միայն պետութիւնը, աւելի ճիշդ՝ իշխանութիւնները կրնան այս բարդ խնդիրին լուծում գտնել: Մնացեալ մասնակի փորձերը, Սփիւռքի օժանդակութիւնները (որոնք ի դէպ կարողականութեան առումով ակնկալուածք չ'են դժբախտաբար) փոքր մասնիկն են ընդհանուր աշխատանքին: Տնտեսական տագնապները կարելի է շրջանցել միայն պետական մակարդակի վրայ: Այս «տեսութիւն» ընդունուած է ամբողջ աշխարհին կողմէ եւ կը վերաբերի բոլոր պետութիւններուն առանց բացառութեան:

Ասոր վուզահեռ, անշուշտ նաեւ արձանագրուեցան յաջողութիւններ, ինչպէս՝ պաշտպանութեան մարպիւն մէջ, որոշ չափով արտաքին քաղաքականութեան մէջ, ինչպէս նաեւ հայրենիք - Սփիւռք անշրջանցելի կապերու իմաստով:

Պաշտպանութեան մարպիւն մէջ հաւանաբար ամէնէն աւելի յաջողութիւնները արձանագրուած են ցարդ: Այսօր ունինք ամրակոշ, կազմակերպուած ու կովկասեան չափանիշներով հզոր բանակ: Կա՞յ աւելի գօտեպնդող տուեալ քան այս իրողութիւնը:

Հայրենիք - Սփիւռք կապերուն գծով թէեւ տակաւին կան հսկայական աշխատանքներ կատարելիք, սակայն շրջանցած ենք ամէնէն էականը՝ օտարերկրացի - տեղացի անհեթեթ բարդոյթը: Այսօր չկայ դրսեցիի կամ բնիկի տրամադրութիւն, այլ կայ Հայ, գլխազիր ՀԱՅ միայն: Փաստօրէն Հայաստանի մէջ օրէ-օր կը բազմապատկուի թիւը սփիւռքահայ գործարարներու, հայրենիք հաստատուող հայ երիտասարդներու նկատառելի թիւը մը կայ, զոր չենք կրնար չողջունել կամ անտեսել, սակայն միաժամանակ քաջ գիտակցելով, որ եղածը բաւարար չ'է, մասնաւոր նոր անոնք անձնական «երկչոյց» նախաձեռնութիւններ են եւ անոնց կը պակսի համազգային ծրագրուած բնոյթը, որ էականն է անկասկած:

Ինչ կը վերաբերի արտաքին քաղաքականութեան, հայրենի իշխանութիւնները թէեւ ի վերջոյ յստակօրէն ճշդած են Հայկական Յեղասպանութեան քաղաքական արժէքն ու բնոյթը, սակայն անոնց մօտ առկայ է տակաւին խարխափումը մեր հայրենիքի անվտանգութեան սպառնացող թշնամի թուրքոյի եւ Ազրպէյճանի նկատմամբ, ինչ որ կը մտահոգէ իրաքանցիւր հայ: Մասնաւոր հայ - թուրք յարաբերութեանց փշոտ ու վզայուն հարցին գծով կը շարունակուին ոչ յստակ ու ֆլու կեցուածքներ դրսեւորուիլ, ինչ որ բնականաբար անյարիր կը նկատուի համազգային մեր մտածողութեան, իսկ բոլորս գիտենք, թէ վերջին հաշուով ի՞նչ կրնայ պատահիլ, երբ համազգային մեր կիսնախարգերուն նկատմամբ մեղանշում կատարուի...

Հայաստանի վերանկախացման 12ամեակին առիթով, իշխանութիւնները պարտին ակննջ տալ մեր ժողովուրդին, իսկ ժողովուրդը ի Հայաստան եւ ի Սփիւռք ոգի ի բոխ տէր կանգնի իր պետականութեան, եւ հայու անկոտորում կամքով ու համոզումով, ազգովին, պետութիւն - ժողովուրդ մէկ բռնուցք դարձած՝ շարունակենք մեր երթը, շարունակենք կերտել հայրենի վայելք բարգաւաճ ու հզոր հայրենիք մը, որ ի վերջոյ պիտի դառնայ ամուր եւ հաստատ կորիզը Ամբողջական Հայաստանի մեր սրբապան տեսլականին:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

**2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ՏԱՐԻ**

**ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԸ՝ ԲՈՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ**

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ, ՍՈՒՐԵՆ ԽԱՆԱՄԻՐԵԱՆ, ՌՈՒԲԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՋ» ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ





# Գրական Էջ

## ԱՆԸՆԴՀԱՏ ՆՈՐ ՕՐ...



Հայաստանի եւ Սփիւռքի չորս ծագերուն ծխարձակող գրական նոր անունները արժանի են յատուկ ուշադրութեան: Հակառակ արուեստի եւ գրականութեան բնականոն ընթացքը խանգարող մակերեսայնացման համաշխարհային ծանօթ հովերուն եւ ամէն բան շուկայական ակնոցով դիտելու հակարուեստ մօտեցումին, գեղեցիկին սպասարկու նոր անուններ կը շարունակեն իջնել հրապարակ՝ գիրքի եւ գեղեցիկ խորհուրդի վերածելու համար հայ մարդուն մերօրեայ տագնապները, տառապանքները, յուսախաբուրելները, երազները, ուրախութիւններն ու սէրները:

Իրենց հոգիին պրիսմակին ընդմէջէն մերօրեայ կեանքն ու հայ մարդուն մարդկային ու ազգային ապրումները անհատական թէ հաւաքական գունաւորումներով, բայց ամէնէն կարեւորը՝ նոր ծայրով երգող երիտասարդ սերունդի շնորհալի անուններուն դիմաց մենք յանձնարարական գառն ենք այս էջով եւ այսուհետեւ նաեւ իրենց գրական նիւթին ու փորձին պիտի հետեւինք միեւնոյն խանդավառութեամբ եւ ուշադրութեամբ:

Հայ գրականութեան առողջ ապագան երաշխաւորող այս քարմաշունչ տղարքն ու աղջիկները արժանի են ամբողջական գուրգուրանքի եւ քաջալերանքի: Անոնք հայ գրականութեան շարունակականութիւնը հաստատ պահող մեր վաղուան զսպանակներն են եւ նորագոյն արտաշայտուրիւնը հայ ոգիին դարաւոր խորհուրդներուն, որուն նոր խնկարկուններուն ձայնը տարբեր լլլալով հանդերձ նախորդ սերունդներու գրական ծայրէն ու համոզումներէն, այնուամենայնիւ, մէկ է սակայն հայ գիրքի եւ մշակութային կանթիւնի մէջ քանի մը կաթիլ նոր ձեւակերպելու անոնց հաւատքն ու ուխտը, հայ գրողի պատասխանատու գիտակցութիւնն ու անմնացորդ նուիրումը:

Այս յանձնառու մօտեցումին պայծառ դրսեւորումներէն են հայրենի երիտասարդ բանաստեղծ Գեորգ Թումանեան եւ պատմուածագիր Մհեր Բէյլերեան, որոնց «Անընդհատ անառակ որդի» եւ «Վերջին օրը» խորագրեալ առաջին գրքովները լույս տեսան տարի մը առաջ, Հայաստանի Գրողներու Միութեան «Մուտք» մատենաշարով:

Հետաքրքրական եւ ուշադրութեան արժանի իր բանաստեղծական աշխարհը կերտող շնորհալի անուն մըն է 1974ին Գիւմրի ծնած Գեորգ Թումանեան, որուն քերթուածներուն ընդմէջէն լոյսին բացուող աշխարհը մարդկային հոգիի նուրբ լարերուն կշռոյթներով, կարօտներով ու երազներով, պոռթկումներով ու լուրթեամբ ամբողջացող այն հոգաւորութեան բ, ուր թախիծն ու ցնձուրթիւնը բանաստեղծին բնութեւն կ'օժտեն իւրաքանչիւր շերտութեամբ, գուրբախոն-հեգնախոն երանգներով եւ թելադրականութեամբ:

Կեանքի այսօրուան իրականութիւնը, դառնութիւններն ու սարսփները նոր աշխարհահայեացքով ու պատկերամտ ծողութեամբ կը կարդայ նաեւ Մհեր Բէյլերեան (1977ի ծնունդ), որուն խօսքը նոյնպէս, զինք կանխած սերունդին գրական փորձին վրայ հիմնուելով հանդերձ՝ շարունակ կը ձգտի կարկառել իր ժամանակի առանձնաշատկութիւնները: Իրականութեան բազմազանութիւնը, կեանքի հանդեպ մարդ եակին տածած սիրոյ անվերջ ապրումները, անհեթեթ կացութիւններուն յաջորդած անորոշ լուրթիւնը Մհեր Բէյլերեանի աշխարհահայեացքը կ'օժտեն լայն տեսաբանական խորաբախման գործութեամբ: Եւ որովհետեւ «Նորը լաւ մոռացուած հին վատ յիշուող կրկնութիւնն է», ինչպէս կը սիրէ ըսել Մհեր Բէյլերեան, տագնապ ու խոն, ապրում ու երազ ունենող այս երիտասարդը նաեւ կը լծուի լեզուաոճական ու կառուցային փնտռութիւններու՝ հայ արձակի աւանդները նոր շունչով ու աշխարհահայեացքով հարստացնելու համար:

Հայ ժամանակակից գրականութեան սեմէնները հաստատ քայլերով մուտք գործած այս տղաքը չեն կրնար կանգ առնել: Իրաւունք չունին եւ, անկասկած, միշտ պիտի դարպասեն «վերջին» յաջորդող նոր օրը, որպէսզի հայ գրականութիւնը շարունակէ մնալ անընդհատ սկսող նոր օր:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ

### ԻՄ ԱՐԻՒՆԸ

Իմ արիւնը բանական է: Երեք տարեկանում ափս պատեցի ու առաջին անգամ նկատեցի, որ ասֆալտին ծորած արիւնն շարունակում է մտածել: Վեց տարեկան էի, երբ արիւնն ցայտեց կանաչներէցս: Ես մէջքի վրայ ընկալ յատակին ու տեսայ, թէ ինչպէս է արիւնն վտառներով պատերն ի վեր բարձրանում ու առաստաղին խորհրդաւոր նշաններ գծում: Հետագայում պարզեցի, որ դրանք աստրական սեպագրեր ու եգիպտական հիերոգլիֆներ են: «Դու իմ ստրուկն ես, - գրել էր արիւնս, - կարգա՛ւ՛ իմ անուններն ու խոնարհուի՛ր»: Վերջում անհասկանալի նշաններ էին եւ եգիպտական «մահ» հիերոգլիֆը: Արիւնն հետզհետէ աւելի անկանխատեսելի ու աղբիւսիւ էր դառնում: Զբօսայգում համբուրում էի շիկահեր աղջկայ շուրթերը, երբ արիւնն բերանիցս գուրս ցայտեց: Աղջիկն ուշաթափուեց, իսկ արիւնն ասֆալտին նկարեց աղջկայ տոհմածառը եւ գրաւոր հրամայեց, որ ոչ մի դէպքում արիւնն չխառնեմ նրա արեանը: Մի անգամ արիւն տուի հիւանդ ընկերոջս, բայց յաջորդ օրն արիւնն վերադարձաւ, իսկ ընկերոջս վիճակն աւելի ծանրացաւ: Բարկացած մտայ արտաքին, բացեցի զարկերակներս ու ողջ արիւնն լցրի զուգարանի անջրջ՝ չկասկածելով, որ արիւնը ջրի մէջ չի լուծուում: Բժիշկներն անզօր թօթուում էին ուսերը, հեքիմները՝ փախչում, զիր նայողները թուղթ ու գիր էին անում:

- Զեզ մօտ առկայ է էդիպեան բարդոյթը, - բացատրեց հոգեվերլուծաբանը, - գիտակցական մակարդակի վրայ սրուած է կոլեկտիւ անգիտակցականը եւ ստուերի արքետիպը, որպէս փոքրիկ Հանսի բարդոյթի կոմպենսացիա եւ ենթագիտակցականի դեգեներացիա...

Արիւնն ահաւոր հայհոյանքներով բերանիցս խոռոպով թքուեց հոգեվերլուծաբանի երեսին: Նման պատկերաւոր ու սպառչի հայհոյանք երբեք չէի լսել: Արիւնն պարզաբանեց, թէ հօրս պապն այն ստիճանը քփուրկան մարդ է եղել, որ դա մտել է իր գենետիկ համակարգի մէջ՝ այլասերելով բրոմոսոմաների գրալի մասը: Հպարտութեամբ յաւելեց, որ աշխարհում առաջին հայհոյանքը ելլել է իմ հեռաւոր արիւնակցի շուրթերից, երբ կինն իրեն խաբէութեամբ որդնած խնձոր է մատուցել:

- Բայց յոգնել եմ քեզանից, - տխուր աւելացրեց նա, - մի օր քեզ կը լքեմ ու կը հանգստանամ հողի մէջ:

Այդպէս էլ եղաւ: Լողանում էի. արիւնն ուռնագրիցս մինչեւ վերջին կաթիլը դուրս յորդեց: Երկար սպասեցի, բայց այդպէս էլ չեկաւ: Դարձայ անարիւն սառը հայփան: Բոլորի ու ամէն ինչի հանդէպ անտարբեր էի: Բայց կատարուեց հրաշք՝ սիրահարուեցի: Երբ համբուրուեցի, աղջկայ աչքերից յորդեցին այլ արցունքներ: Ես լեզուով սրբեցի դրանք ու ճանաչեցի իմ արեան համը: Մենք պարզեցինք, որ իմ պապի տատն է իր տատի պապը կենակցելու, մենք ունենք նոյն արիւնը: Երկուսս էլ զղջացինք, որ այդ լուրը չափազանց շուտ իմացանք՝ չհասցնելով կարգին կենակցել, ինչպէս իրոյր նորմալ հեռաւոր բարեկամները: Զղջացինք, որ լուրն իմացանք չափազանց ուշ եւ արդէն հասցրին համբուրուելու սիրահարուելու:

Այդպէս էլ չամուսնացայ, բայց շուն եմ պահում: Տաքարիւն շուն է. բոլորին լիզում է, իսկ ինձ կծոտում է ու տեղի-անտեղի հաջում վրաս: Շան որդին կռահել է: Վերջերս գիշերը վրաս յարձակուեց մի տարեց թռչակառու: Ատամները վզիս մէջ խրեց՝ ապարդիւն փորձելով արիւնս խմել:

- Գունանոյիդ ե՞ս, արա, - հարցրեց՝ վիզս ազատելով:
- Ամէն ինչ պատմեցի, իսկ նա վտահեցրեց, որ չնայած իր բազմամեայ փորձին՝ նման դէպքի առաջին անգամ է հանդիպում:
- Գոնէ վամպիր դառնալի, - աղբիւսեցի թախանձագին աչքերով:
- Ոչ մի դէպքում, - դռուց ու արագ քայլերով հեռացաւ, - հայրենիքին արիւն ենք տուել: Խաւարի միջից լուսւում էր նրա մըթմըթոցը, ո՛ւմ պէտքն ա: Սաղ սուտ ա: Արիւնը ջուր ա դառել:
- Երկու անգամ դանակով ծակել են, երիցս կրակել զլիսիս: Մի քանի անգամ արթնացել եմ դիարանում, իսկ մի անգամ, նոյնիսկ՝ դազադուում: Դազադուց իջնելով, չիմանալով՝ ինչ ասել, ժամը հարգրի: Ներկաներից երկուսն ինֆարկտ ստացան, մէկը սկզբ ակնակցել, մէկի մազերը սպիտակեցին, միւսը գոչեց ալելուիա եւ հոգին աւանդեց:
- Ես չեմ ծերանում, չեմ սիրահարուում, մի խօսքով՝ մեռած եմ - թաղած չեմ: Միակ ցանկութիւնն արիւնն գտնելն է: Յոյսով եմ՝ նա էլ ինձ է փնտռում:
- Երբեւէ մի տեղ կը հանդիպենք...

### ԱՐՏԱՔԻՆ ԽԱԻԱՐԻ ՍՏՈՒԵՐՆԵՐԸ

ՎԱՂԱՍԵՐԻԿ ԸՆԿԵՐՈՋՍ՝ ՎԱՐԸՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

«Աստուած-մարդ լափողը» Թովմասի պարականոն աւետարան

Տեսքն ամենի էր, աչքերը՝ մանկական: Ունում էր ու արտասուում, իսկ աչքերը ժպտում էին, նոյնիսկ երբ արծիւները կտցում էին դրանք: Զինջ-կանաչ աչքերով ամբողջ գիշեր աղերսագին ատելութեամբ նայեց ինձ եւ յիշեցրեց այն կնոջը, որն աչքերիս մէջ նայելով՝ մերկ կրծքերի արանքում ճգմեց իր նորածին մանկանը: Տեսքն ամենի էր, աչքերը՝ ջինջ-կանաչ, խուժեց մոլեգին ու ժպտուն, մերկացրեց սուրբ, իսկ ես համարուած նայում էի աչքերին: Ուշքի եկայ ճնշող լուսութիւնից, չկայ աւելի նողկալի բան, քան բռնաբարուող կնոջ լուսութիւնն է: Փորձում էի ազատուել կապանքներից, ձայներ էի արձակում, որ իմը չէին՝ ահաւոր էին ու ձգող: Ժպտուն աչքերով գինուորը ելաւ կնոջս վրայից, մօտեցաւ բարուրին, ոտքից բռնած բարձրացրեց գաւակիս, միւս ձեռքով բարձրացրեց սուրբ: Կինս մօտեցաւ, մեղմ շոյեց գինուորի ձեռքին եւ նայեց ինձ այնքան, մինչեւ չդադարեց մանկան լացը: Զգուշօրէն բարուրի մէջ տեղաւորեց դիակն ու ապշած գինուորի ձեռքից սուրբ խելով՝ ինքնասպան եղաւ:

Կան պահեր, որ երբեք չեն աւարտուում, միշտ մնում են քեզ հետ: Գիտես, որ անցել է, բայց կրկնում է ամէն օր, ամէն վայրկեան: Կէս ժամում սպաննուեցին երկու տարին չբոլորած քառասուն մանուկներ, եւ այնժամ կատարուեց Երեմիա մարգարէի բերանով ասուածը, թէ՛՝ Ռամայում մի ձայն գուժեց. ողբ ու լաց ու սաստիկ կոծ-Ռաբէլը լալիս էր իր գաւակների վրայ եւ չէր ուզում միթիթարուել, քանի որ նրանք այլեւս չկային:

Բեթղեհէմի նորածիններից միայն երկուսը փրկուեցին: Մէկը՝ հիւսն Յովսէփի գաւակն էր. կոտորածից մի քանի օր առաջ Յովսէփի, կնոջն ու գաւակին վերցնելով, ուղեւորուել էր Եգիպտոս: Միւսը՝ եօթ օրական մի տղայ էր. ծնողները հասցրել էին թաքցնել նրան, բայց իրենք սպաննուել էին:

Քաղաքում բոլորը խօսում էին մոգերի, Հերովդէսի ու Յովսէփի տղայի՝ փոքրիկ Յիսուսի մասին, խօսում էին, որ Հերովդէսն անբուժելի հիւանդ է, եւ նրան մնացել է մէկ-երկու տարուա կեանք: Մարդիկ խօսում էին, ես՝ թաղում էի կնոջն ու գաւակիս, նրանք փսփսում էին, ես՝ փող էի կուտակում Եգիպտոս ուղեւորուելու համար, ենթադրութիւններ էին անում, իսկ ես գիտէի, որ կոտորածի պատճառը Յովսէփի գաւակն էր եւ Յովսէփը, որը ոչ մէկին չէր զգուշացրել սպասուող աղէտի մասին: Ինձ աւելին պէտք չէր իմանալ: Ժպտուն աչքերով գինուորին լափել են արծիւները, Հերովդէսն անբուժելի հիւանդ է, իսկ քեանթառ հիւսնը երիտասարդ կնոջն ու գաւակի հետ վայելում է կեանքը:

Ատելութիւնն ու վրէժը ինձ ուժ տուեցին, եւ ես մենակ անցայ անապատը՝ իրադործելու համար ճշմարիտ արդարագատութիւնը: Վրէժն ու ատելութիւնն ինձ գորացրին, եւ ես՝ սոված ու հիւծուած, ի վերջոյ գտայ նրանց: Մուծն ընկնելուն պէս կամաց սողոսկեցի նրանց տուն: Քամուց օրօրուող ճրագը թոյլ լուսաւորում էր սենեակը: Անկիւնում քնած էին Յովսէփն ու իր կինը, իսկ կենտրոնում առաստաղից կախուած բարուրն էր: Առաջինը պիտի սպաննէի փոքրիկին. Յովսէփն ու Մարիամը մահաւանդեց առաջ պիտի իրենց կաշուի վրայ զգային նորածին գաւակի կորուստը: Մօտեցայ բարուրին: Զէի մտածում, թէ ինչպէս պիտի այդ անեմ, չէի մտածում դժոխքի մասին, եւ ոչ էլ վախենում էի, որ հոգիս մահաւանդ յետոյ կը նետուի արտաքին խաւարի մէջ: Մարդիկ են արտաքին խաւարի ստուերները: Կայծակն ուժեղ լուսաւորեց սենեակը. մանուկը բացեց աչքերն, ու դանակը ձեռքիցս ընկաւ: Բարուրի մէջ իմ գոհուած գաւակն էր. նրա մարմինն իմ ձեռքով էի յանձնել հողին, ձեռքերս դեռ յիշում էին այդ մարմնի բոլոր ծալքերը, աչքերս յիշում էին նրա ջինջ-կանաչ ժպտը, իսկ ուռնագրիս մէջ դեռ թարմ էր բուրմունքը, որ չէի կարող չփոթել աշխարհի ոչ մի ուրիշ բոյրի հետ:

Յովսէփն ու Մարիամը լուռ նայում էին ինձ, եւ մենք արտասուում էինք:

Կան պահեր, որ երբեք չեն աւարտուում, միշտ մնում են քեզ հետ: Գիտես, որ անցել է, բայց կրկնում է ամէն օր, ամէն վայրկեան: Ես վերադարձայ հայրենիք, որդեգրեցի կոտորածի ժամանակ քաղաքում գտնուած ու հրաշքով փրկուած այն որբ մանուկը, վաճառեցի տունս, տեղափոխուեցի իսկարիովս, իսկ մանուկի անունը գոհուած տղայիս յիշատակին կնքեցի Յուզա:

ՄՀԵՐ ԲԵՅԼԵՐԵԱՆ

## ԿԱԹՈՒՆԵՐ

Դեղին մի տներու Ափսիս մէջ ընկաւ: Բայց չէի կարող Ես նրան օգնել:

\*\*\*

Ես ստուերն եմ Հրդեհի ստուեր Ես հրդեհ կ'ուզեմ լինել

\*\*\*

Ես կաթիլ եմ Ինչ-որ տեղից կախուած կաթիլ Հասունացող մրգի պէս Կեանքից կեանք կ'ընկնեմ

\*\*\*

Ես գետ եմ Դէպի ծովը հոսող գետ Ես ծովի անառակ որդին եմ

\*\*\*

Ես լեռ եմ Իմ հրաբուխը Մի օր կը պոռթկայ

\*\*\*

Ես փարուսնա թիթեռ եմ Որտե՞ղ է բոցս

\*\*\*

Ես արեւ եմ

Իմ մոլորեալներին Ես լոյս եմ տալիս

\*\*\*

Ես ծառ եմ Ինձ ծաղկելը անհրաժեշտ է

\*\*\*

Ես շուն եմ Եւ վնաստում եմ Երբ մարդիկ Ինձ քացի են տալիս

\*\*\*

Ես թուրի յաջորդականութիւնն եմ Ռացիոնալ Իռացիոնալ Եւ կոմպլէքս

\*\*\*

Ես քամի եմ Ես աննպատակ եմ

\*\*\*

Իմ մէջ Ինչ-որ բան կայ գետից - Դադարում ես չկամ:

Անշուշտ կայ լոյսից - Ինձ խանդավառում է թափանցելը:

Կայ նաեւ ծառից -

Ինձ էլ է բնորոշ ծաղկելը:

Եւ թոչուոնից կայ - Զգում է ինձ երկինքը:

\*\*\*

Պահն է արդէն վեր ձգուելու, Թախիծը կար - եւ ընկրկեց: Կապոյտ երկինք, ամպերիդ հեն Բիբերիս մէջ տարածուի որ:

Ես թիթեռներ նախքեմ պիտի Եւ մեղուներ արձակեմ ժիր, Եւ որպէսզի հարքեմ մի կալ, Բէպ կը խմեմ, արեւ-եղբայր:

Թախիծը կար - տե՛ս, հեռացաւ, Պահն է արդէն վետվտալու, Ես իմ հոգին դուրս կը թողնեմ Անույտներում արածելու:

Ես իմ հոգին դուրս կը հանեմ, Մտրուկ է նա, պիտի վարգի, Եւ մարմինս՝ ցորենի հասկ, Հատիկներս ցրուեն պիտի:

Թախիծը կար - նա ե՛տ կը գալ, Պահն է հիւսն օրօրուելու, Երբ որ նորից ներսուպուի նա, Ծաղկեփոշին էլ չի բուրի:

ԳԵՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

## ԱԿՆԱՐԿ

### «ՊԱՀՊԱՆԵ՛՛ ՀԻՆԸ, ԲԱՅՅ ԳԻՏՅԻՐ ՆՈՐԸ» (ԱՅ ԴՊՐՈՑԸ ԵՒ ԱՄԱՅԱՆՑԸ)

Չինական այս առածը այնքան կը պատշաճի 21րդ դարու հոսանքներն ի վեր իր գոյամարտը մղող ժողովուրդներուն: Մենք՝ հայերս, իբրև «հին» ժողովուրդ, տեւաբար պայքարած ենք, գէթ փորձած ենք պայքարիլ, որպէսզի պահպանենք հինը, սակայն կը թուի, թէ երբեմն ըրած ենք այս մէկը առանց նորը գիտնալու, հինն ու նորը համարելու, նորը՝ հինով «միւտնելու», հինը՝ նորով արժեւորելու, եւ այդ պատճառով ալ մեր նոր սերունդը հեռացած է հինէն եւ նորին մոլորփունեքով տարուած միայն, առանց անոր շունչով թարմանալու:

Այս իմաստով, հայ դպրոցը, իր այնքան ծանրակշիռ մարտահրաւերներուն կողքին (նիւթական դժուարութիւններ, ուսումնական-կրթական մակարդակի պահպանում, հայ աշակերտներուն դէպի «օտար» դպրոց հոսքի կասեցում, եւ այլն), պարտի թալլ պահել նաեւ տեղեկատուական արհեստագիտութեան սրբոց գարգացման հետ, ապա թէ ոչ հինը կը մնայ հիներուն միայն, իսկ նորերը թեւեր առնելու հերթին մէջ կը մտնան իրենց արմատները:

Ինչպէս ամէն բնագաւառի մէջ, նոյնպէս ալ ուսումնական կեանքի մէջ համակարգիչը, համացանցը եւ ընդհանրապէս արդի արհեստագիտութիւնը փոխած են «խաղի կանոնները», սկիզբէն գրած՝ ուսման «սահմանադրութիւնը»: Ուրանալ այս նշմարտութիւնը՝ ինքնախաբէութիւն եւ չալամի բաղադրականութիւն է, անոր դժբախտութիւնն է, թէ բարեբախտութիւն ըլլալուն մասին խորհրդածելը՝ ժամանակի կորուստ: Կը գտնուինք կատարուած իրողութեան առջեւ: Ելեկտրոնային կը փոխարինէ թուղթը, իսկ այս երեւոյթին դէմ կանգնելը կը նմանի ծիակառքերը ինքնաշարժներով փոխարինելու հոլովոյթին ընդդիմանալու...:

Այս տողերը, հասկնալիօրէն, կրնան ընդվրգեցնել եւ ցնցել ոմանք: Սակայն, խնդրե՛մ, բււածը անճանաչութեան կոչ չէ, ոչ ալ գիրքերը թափելու «արքայազնութեան» առաջնորդող կարծիք: Երէ չորրորդ դարի հանդէպ անսահման սէրը, պիտի չգրուէին այս տողերը: Սակայն «գիրք» ըսելով չենք հասկնար խաւարարտի կտորներու միջեւ շարուած թուղթեր, այլ՝ հոգեմտաւոր լոյսի շտեմարան, ըլլալու մագաղապ, լաթակազմ հատոր կամ «ՍԻ. ՏԻ»: Թուագրային «գիրք»երը, որոնք հետզհետէ կը փոխարինեն խաւարարտն ու խեղճ փակցուած բուղթերը, պարզապէս գիրքերու «լոյս»ը կը փոխարինէ դէպի համակարգիչ եւ համացանց, եւ օր առաջ այս աստիճանաւոր փոփոխութեան գուգահեռ եթէ փոփոխութիւն չընթերցէ մեր բոլոր համակարգերուն մէջ, անխուսափելիօրէն կը հասնի օրը, երբ ցեցուած թուղթերու մէջ կը խեղդենք եւ մեր անցեալը, եւ մեր ներկան:

Ահա թէ ինչու արմատական փոփոխութիւն պէտք է կատարենք նախ եւ առաջ մեր կրթական համակարգին մէջ, որ ողնասխիւն է հայապահպանումին: Հայ դպրոցին մէջ համակարգիչը տնօրէնութեան, քարտուղարութեան կամ ուսուցչարանի սեղանները գարդարող ամլացած սարք մը պէտք չէ ըլլալ: Հայ աշակերտը պէտք է մօտեն անչնայ համակարգիչը եւ յատկապէս համացանցին վրայ ուսումնասիրական աշխատանք, փնտնուող, տեղեկահաւաք կատարել սորվի: Այս կը նշանակէ, թէ պէտք չէ բաւարարելի պետական կրթական ծրագիրներով, այլ՝ անցնիլ անոնցմէ անդին, հայ աշակերտին փոխանցել հինը՝ արդի միջոցներով, եւ այդպիսով զինք հաղորդակից դարձնել ոչ միայն իր անցեալին, այլ՝ համացանցի եւ համակարգիչի օգտակար կողմերուն, որոնք անհերթ չէթէն եւ համակարգչային խաղերէն շատ աւելի անդին կը գտնուին:

Ահա թէ ինչու պէտք չէ նոյնիսկ ըսել «Պաշտպանէ՛ հինը, բայց զիտցի՛ր նորը», այլ՝ «Գիտցի՛ր նորը, որպէսզի պահպանես հինը»:

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

## «ԴԱԲԱՃԱՆ» ՆԷՔԸՐԸ

Միացեալ Նահանգներու Դաշնակցային դատարանի պաշտօնատարներ երախտագիտութիւն յայտնեցին նախկին Համակարգչային ժառանգ պատրաստողի մը, միջազգային «վարկ» ունեցող հեքըրներ ձերբակալելու աշխատանքին մէջ իր ունեցած ներդրումին համար:


Սեպտեմբեր 17ին Հրապարակուած փաստաթուղթերու Համաձայն, Մմիթ սատարած է թէ՛ Միացեալ Նահանգներու, թէ՛ Միացեալ Նահանգներու «Մելիսա» ժառանգ արձակելով 80 միլիոն տոլարի վնասներ պատճառած Տէյվիտ Մմիթ «էֆ. Պի. Այ.»ի հետ սկսած է գործակցիլ 1999ին, իր ձերբակալութենէն անմիջապէս

ընդհատելով իր աշխատանքը: Իր այս աշխատանքին իբրեւ վարձատրութիւն, Մմիթ, որ կրնար 10 տարեալ ընտանաբար կապուած զատապարտուելի, ստացած է միայն 20 ամսուան ազատազրկում:

Ատեանի Հրապարակած փաստաթուղթին Համաձայն, Մմիթ սատարած է թէ՛ Միացեալ Նահանգներու, թէ՛ անկէ դուրս գտնուող հեքըրներու բացայայտումի եւ ձերբակալման աշխատանքներուն: Փաստաթուղթին Համաձայն, իր ձերբակալումէն երկու ամիս ետք,

հեքըրին անունը, տան եւ նամակի հասցէները: «էֆ. Պի. Այ.» այս տեղեկութիւնը փոխանցեց Հոլանտայի իշխանութիւններուն, որոնք ձերբակալեցին հեքըրը:

Մմիթ նաեւ արձանագրած է Սայմըն Վալըրի հետ Համացանցային իր գրոյցները: Այս վերջինը հեղինակն է «Կոքար» ժառանգի, որ աշխարհի տարածքին «Մայքրոսոֆթ»ի բազմաթիւ Համակարգչային դրութիւններու վնաս Հասցուց: Մմիթի տրամադրած տեղեկութիւններուն Հիման վրայ Բրիտանիոյ իշխանութիւնները ձերբակալեցին Վալըրը:



Ետք: Ան իր ինքնութիւնը կեղծելով հարդարակցութեան մտած է հեքըրները, որ երկու տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Մմիթ «էֆ. Պի. Այ.»ին յանձնեց «Աննա Քուրնիթովա» ժառանգ տարածողը, որ երկու տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

## ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՄԱՋԱՅՆ

### ՉՐՈՅՅԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ՝ ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ԵՒ ՍԻՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅ ԳՈՐԾԱՏԵՂԻՒՆ ՄԷՋ



Սեպտեմբերի կիսուն Հրապարակուած Հարցախոյզի մը համաձայն, գրասենեակներու եւ աշխատատեղերու մէջ «ինսթրնթ մեսենճիկ»ի ծրագիրներ, ինչպիսին են «էմ. էս. էն» կամ «Եասու» մեսենճըր, կ'օգտագործուին առաւելաբար բարձրաստիճանի ու պաշտօնակիցներու հետ «սիրաբանելու համար» եւ ո՛չ աշխատանքը եւ գրասենեակներու միջեւ հարցողակցութիւնը զիւրացնելու նպատակներով:

Սեպտեմբերի կիսուն Հրապարակուած Հարցախոյզի մը համաձայն, գրասենեակներու եւ աշխատատեղերու մէջ «ինսթրնթ մեսենճիկ»ի ծրագիրներ, ինչպիսին են «էմ. էս. էն» կամ «Եասու» մեսենճըր, կ'օգտագործուին առաւելաբար բարձրաստիճանի ու պաշտօնակիցներու հետ «սիրաբանելու համար» եւ ո՛չ աշխատանքը եւ գրասենեակներու միջեւ հարցողակցութիւնը զիւրացնելու նպատակներով:

Տրուած ըլլալով որ պաշտօնեաններէն շատեր կը կարծեն, թէ իրենց գործատէրերը կամ ալ պաշտօնակիցներ չեն կրնար լրտեսել իրենց գրածները, անոնք իրար կ'ուղարկեն սիրաբանական խօսքեր, ինչպէս նաեւ կը բարձրաստիճանի պաշտօնակիցին հագուածքին, մազի յարարումին եւ նման «մանրուք»ներու մասին:

Բրիտանական ընկերութիւններէ Հարցախոյզին մասնակցող 204 պաշտօնեաններէն 65 առ հարիւր ընդունած է, թէ աշխատանքային ժամերու ընթացքին «ինսթրնթ մեսենճիկ»ի ծրագիրներով ալոյց հետ կը զրուցէ ոչ աշխատանքային նիւթերու մասին: Անոնց մէջ երրորդը, իր կարգին, խոստովանած է, թէ «սեռային ոտնձգութիւններ» կատարած է գործատեղիին համացանցային զրոյցի ծրագիրներուն միջոցով:

Հարցախոյզին արդիւնքներուն համաձայն, ամերիկացի պաշտօնեաներ աւելի գուցայ են: Անոնց մէկ հինգերորդը միայն խոստովանած է, թէ զրոյցի ծրագիրները բարձրաստիճանի պաշտօնակիցներու հետ կատարուած են: Հարցախոյզին արդիւնքներուն համաձայն, ամերիկացի պաշտօնեաներ աւելի գուցայ են: Անոնց մէկ հինգերորդը միայն խոստովանած է, թէ զրոյցի ծրագիրները բարձրաստիճանի պաշտօնակիցներու հետ կատարուած են:

## «ԱՂԹԱՄԱՐ»


### ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չեր ձեռնային պաշարին համար պահանջեցէ՛ք LOUJI «Աղթամար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական ջերմութեամբ, ծիրանի, թուզի, վայրի կեռասի, նարինջի, դուրմի եւ սերկեղի անուշներ. կարմիր պղպեղի փոշի եւ խիւս, անանուխի փոշի, թուրանդ, լուիկի պահածոներ, եւ այլն: Փնտեղե՛ք բոլոր supermarketներուն մէջ, համապատասխան մօտ, ինչպէս նաեւ նորաբաց Auxilia Coop-ին մէջ, Անթիլիան եւ միւս մասնաձիւղերը, եւ LOUJI «Աղթամար» Պուլկուրմէան» ընկերաբաշխական կեդրոն 4րդ յարկ: Այս վաճառքը գոյացած գումարները կը ծառայեն LOUJI կրթական - ընկերային եւ առողջապահական նպատակներուն: Դեռ. 01/242898 եւ 01/265359:

LOUJI ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

### Հ. Յ. Դ. Ի ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸՆՈՐ ՉԵՒԱՒՈՐՈՒՄՈՎ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ




Հ. Յ. Դ. Ի պաշտօնական կայքը (www.arfd.am) հանրութեան կը ներկայանայ նոր ձեւաւորումով եւ հարուստ բովանդակութեամբ: Երկվեցու (հայերէն եւ անգլերէն) այս կայքին զլխաւոր բաժիններն են՝

- Ա.- Կազմակերպական
- Բ.- Մամուլ
- Գ.- Մեր մասին
- Դ.- Քաղաքականութիւն
- Ե.- Արխիւներ
- Զ.- Կապեր

«Կազմակերպական» բաժինով կարելի է կարգալ Դաշնակցութեան կազմակերպական կանոններուն մասին համառօտ տեղեկութիւններ, տեսնել Դաշնակցութեան կառուցը ներկայացնող տախտակը, ինչպէս նաեւ աշխարհի քարտէսին վրայ տեսնել Դաշնակցութեան կազմակերպական շրջանները:

«Մամուլ» բաժինին մէջ ներկայացուած են Հ. Յ. Դ. Ի Հրապարակած պաշտօնական յայտարարութիւնները, պաշտօնական օրկան «Դրօշակ»ի պարունակած նիւթերը, ինչպէս նաեւ ծանօթանալ Դաշնակցութեան պաշտօնական մամուլի աղբիւրներուն:

«Մեր մասին» բաժինով կարելի է ծանօթանալ Դաշնակցութեան պատմութեան Հիմնական դէպքերուն եւ դէմքերուն, կարգալ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովներու համառօտ տեղեկութիւնները եւ անոնցմէ բխած պաշտօնական յայտարարութիւնները (այս բաժինը տակաւին չէ ամբողջացած, ինչպէս նաեւ կարգալ Հիմնադիր երրորդութեան կենսագրականները:



